



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«15» փետրվարի 2014 թ.

N 240/14

*ք. Ստեփանակերտ*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգելու և նախարարության համակարգող ոլորտներում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերն իրագործելու նպատակով *հ ր ա մ ա յ ու մ ե մ*.

1. Հաստատել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության 2015 թվականի աշխատանքային պլանը /կցվում է/:

2. ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարարներին, աշխատակազմի ղեկավարին, վարչության և տեսչությունների պետերին ու բաժնի վարիչներին՝

ի ղեկավարումն և ի կատարումն ընդունել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության 2015 թվականի աշխատանքային պլանը:

3. Ընդհանուր բաժնին՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության 2015 թվականի աշխատանքային պլանը բազմացնել և տրամադրել նախարարության ստորաբաժանումներին, շրջվարչակազմերի ու Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժիններին և հրատարակել նախարարության տեղեկագրում:

*Ս. ԱսրՅԱՆ* Ս. ԱՍՐՅԱՆ

**ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 2015 թ. Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Պ Լ Ա Ն  
 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

h/ h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողը
1	2	3	4
1.	ԼՂՀ նախագահի, ԼՂՀ Ազգային ժողովի, ԼՂՀ Կառավարության, ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ոլորտներին վերաբերող հանձնարարականների, որոշումների, օրենքների ուսումնասիրում և կատարում	տարվա ընթացքում	վարչություն, տեսչություններ, բաժիններ
2.	Վարչակազմերի, բաժինների ու ենթակա հիմնարկների, հաստատությունների կողմից նախարարության ընդունած հրամանների, կարգադրությունների, որոշումների և հրահանգչական փաստաթղթերի գործառույթյան իրագործման վերահսկում	-/-	-/-
3.	Վերադաս մարմիններից, տարբեր հիմնարկ-ձեռնարկություններից ստացված գրությունների ընթացավորում, անհատական և կոլեկտիվ դիմում-բողոքների և գրությունների քննարկում, համապատասխան միջոցների ձեռնարկում	-/-	-/-
4.	ԼՂՀ նախագահին առընթեր տեղեկատվության գլխավոր վարչությանը համակարգի ոլորտների ամսական հաշվետվությունների և աշխատանքային պլանների ներկայացում	յուրաքանչյուր ամսվա վերջին օրերին	վարչություն, տեսչություններ
5.	Նախարարության վարչությունների ու բաժինների մասնագետների աշխատանքային պարտականությունների բաշխում	հունվար	փոխնախարարներ, վարչության եւ տեսչությունների պետեր
6.	Հաճախորդների ընդունելություն	ըստ սահմանված կարգի	նախարար, փոխնախարարներ վարչ. պետ, բաժնի վարիչներ
7.	ԼՂՀ առողջապահության, ԼՂՀ արտաքին գործերի, ԼՂՀ պաշտպանության, ԼՂՀ սոցիալական ապահովության, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, ԼՂՀ Կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության, ԼՂՀ ոստիկանության ու սպորտի պետական կոմիտեի հետ համատեղ միջոցառումների անցկացում	ըստ համագործակցության պլանների	նախարարություններ, վարչություններ, բաժիններ
8.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, պաշտպանության նախարարությունների հետ համատեղ միջոցառումների անցկացում	ըստ համագործակցության պլանների	նախարարություններ, վարչություններ
9.	Համակարգի մասնագետների վերապատրաստման գործընթացի ապահովում	տարվա ընթացքում	Համաձայն ԼՂՀ ԿԳ նախարարության, ՀՀ ԿԳ նախարարության ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի պլանի

**2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

1.	ԼՂՀ օրենքների, ԼՂՀ Կառավարության որոշումների, նախագծերի մշակում և քննարկում ըստ համակարգի ոլորտների	տարվա ընթացքում	վարչություն, տեսչություն, բաժիններ
2.	Կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լիցենզավորման և հավատարմագրման գործընթացի իրականացում	տարվա ընթացքում	լիցենզավորման և հավատարմագրման հանձնաժողով, վարչություն
3.	ԼՂՀ հանրակրթական դպրոցների տնօրենների հավաստագրումների և ուսուցիչների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացում	տարվա ընթացքում	վարչություն
4.	Մասնագիտական, մեթոդական գրականության և տեղեկատվական ժողովածուների հրատարակում «Լուսարար» պաշտոնաթերթի ու «Կրթությունը և գիտությունը Արցախում» հանդեսի բաժանորդագրության, հրատարակման և առաքման գործընթացի կազմակերպում	տարվա ընթացքում	վարչություն, խմբագրակազմ, հրատարակչական խորհուրդ
5.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորվելու գործընթացի իրականացում	տարվա ընթացքում	վարչություն
6.	Նախարարության աշխատակազմի քաղծառայողների թափուր պաշտոնների մրցույթների կազմակերպում	տարվա ընթացքում	աշխատակազմի ղեկավար
7.	Նախարարության աշխատակազմի քաղծառայողների վերապատրաստում և ատեստավորում	տարվա ընթացքում	աշխատակազմի ղեկավար
8.	ԼՂՀ հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազայի համալրում	տարվա ընթացքում	աշխատակազմի ղեկավար

**3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՅՈՒՄՆ՝**

**ԸՍՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՈՐՏՆԵՐԻ**

**3.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ա/ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողը
1.	Աշխատանքներ տանել ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ տեղերում սովորող ուսանողներին դրամական փոխհատուցում տալու համար	ուսումնական տարվա կտրվածքով	առաջատար մասնագետ
2.	ԼՂՀ գիտական կադրերի երիտասարդացման համար Հայաստանի Հանրապետության առաջատար բուհերում և գիտակրթական հաստատություններում 2015/2016 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերի հայտի կազմում և ուղարկում ՀՀ կրթության և գիտության նախարարություն	հունվար	բաժնի վարիչ
3.	ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2015-2016 ուստարվա անվճար և վճարովի ուսուցման տեղերի պլանավորում	փետրվար	վարչություն, բուհեր, ՄՄՈՒՀ-ներ, նախնական մասնագիտական /արհեստագործ. ուսումնարաններ/

4.	ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացվելիք նպատակային տեղերի պլանավորում	փետրվար	վարչություն, բաժին
5.	Արցախի պետական համալսարանի առկա ուսուցման մագիստրատուրայի և ասպիրանտուրայի, «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի մագիստրատուրայի 2015-2016 ուստարվա մասնագիտությունների ցանկի և անվճար ու վճարովի ուսուցման տեղերի պլանավորում	փետրվար	վարչություն, Արցախի պետական համալսարան, «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ
6.	ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի հայտերի կազմում և ուղարկում ՀՀ ԿԳ նախարարություն	փետրվար	բաժին
7.	Արցախի պետական համալսարանի և ԼՂՀ-ին հատկացված ՀՀ պետական բուհերին նպատակային տեղերի բակալավոր որակավորմամբ շրջանավարտների համար ՀՀ պետական բուհերի 2015-2016 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության անվճար ուսուցման տեղերի պլանավորում	ապրիլ-մայիս	բաժին
8.	Մասնակցություն ԼՂՀ և ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված տեղերի 2015թ. ընդունելության կարգի մշակման աշխատանքներին	մայիս	վարչություն, բաժին
9.	ԼՂՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2015թ. ընդունելության կանոնների մշակում	մայիս	վարչություն, բաժին
10.	ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունների հաստատում	մայիս	նախարար
11.	ԱրՊՀ, ԼՂՀ հավատարմագրված ոչ պետական բուհերի, ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների ամփոփիչ ատեստավորման ընթացքի վերահսկում	մայիս-հունիս	բաժին
12.	Օտարերկրյա բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններում ԼՂՀ քաղաքացիների կրթության և կեցության վճարների փոխհատուցման աշխատանքների կազմակերպում	հունիս- օգոստոս	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
13.	ԱրՊՀ, ԼՂՀ հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտների համար ավարտական փաստաթղթերի ստացման հայտի ուսումնասիրում և ուղարկում ՀՀ ԿԳ նախարարություն	հունիս-հուլիս	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
14.	ԼՂՀ ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնարանների ուսումնական պլանների վերանայում ու հաստատում	սեպտեմբեր	նախարար, վարչություն, բաժին
15.	ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրա ընդունվածների անձնական գործերի ուսումնասիրում	սեպտեմբեր	բաժին

16.	Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի կրթական գործունեության ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում	սեպտեմբեր	բաժին
17.	«ԼՂՀ կառավարության 2008 թ. փետրվարի 14-ի N66 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 13-ի N745-Ն որոշման ընթացքի 2015-2016 ուսումնական տարվա կտրվածքով համապատասխան աշխատանքների ապահովում	հոկտեմբեր	բաժին, առաջատար մասնագետ
18.	Մարտունու արհեստագործական ուսումնարանի կրթական գործունեության ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում	հոկտեմբեր	բաժին
19.	Աշխատանքներ տանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ պայմանավորվածության համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից 2012, 2013 և 2014 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բուհեր ընդունված և անվճար ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողների՝ ըստ բուհերի պետական բյուջեով սահմանված մեկ ուսանողի ծախսերի չափով 2015-2016 ուսումնական տարվա ֆինանսական միջոցները փոխհատուցելու ուղղությամբ	հոկտեմբեր	բաժնի պետ, գլխավոր մասնագետ
20.	«ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2016-2017 ուստարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի հաստատման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծի մշակում	նոյեմբեր	փոխնախարար, վարչություն, բաժին
21.	Մասնակցություն ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերում, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատություններում տարեվերջյան հաշվետու ժողովներին	դեկտեմբեր	նախարար, փոխնախարար, վարչության պետ, բաժնի պետ
22.	Արցախի գիտական կենտրոնի 2015 թվականի կատարած թեմաների հաշվետվությունների ուսումնասիրում	դեկտեմբեր	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
23.	Ամենամյա գիտամեթոդական աշխատանքների ստուգատես-մրցույթի կազմակերպում և անցկացում	դեկտեմբեր	վարչություն, բաժին, ԱրՊՀ
24.	«Տարվա լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի կազմակերպում և անցկացում	դեկտեմբեր	վարչություն, բաժին

բ/ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՀՀ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողը
1	Ճշտել ԼՂՀ հանրակրթական դպրոցների շրջանավարտների համար անհրաժեշտ ավարտական փաստաթղթերի պահանջարկը և պատվիրել՝ ըստ անհրաժեշտ քանակի	1-ին եռամսյակ	բաժնի վարիչ
2	Վերահսկել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի շրջանային /քաղաքային/ փուլի առաջադրանքների կազմումը նախարարության մասնագետների կողմից և դրանց առաքումը շրջվարչակազմերի ու Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժիններ	հունվար-փետրվար	ԿԳ վարչության պետ, բաժնի վարիչ, նախարարության մասնագետներ
3	Վերահսկել Արցախյան շարժման տարելիցին նվիրված հանրակրթական դպրոցներում իրականացվող տարաբնույթ միջոցառումների ընթացքը	1-ին եռամսյակ	ԿԳ վարչություն, բաժին
4	ԼՂՀ պաշտպանության բանակի հետ համատեղ միջոցառումների շրջանակներում վերահսկել և անցկացնել ԼՂՀ հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանների սովորողների միջև ստեղծագործական շարադրությունների մրցույթի շրջանային և հանրապետական փուլերը	մարտ-ապրիլ	ԿԳ վարչություն, բաժնի վարիչներ, մասնագետներ
5	Կազմակերպել ստեղծագործական շարադրությունների մրցույթում հաղթող ճանաչված աշակերտների և ժամկետային զինծառայողների հանդիպում և հանդիսավոր կերպով կատարել պարգևատրումները	ապրիլ-մայիս	նախարար, վարչության պետ, բաժնի վարիչ
6	Համատեղ աշխատանքներ տանել ԼՂՀ վարչակազմերի աշխատակազմերին կից անչափահասների հետ տարվող աշխատանքների գծով հանձնաժողովների հետ՝ սովորողների կողմից կարգազանցության դեպքեր չթույլատրելու, հանրակրթական դպրոցներում չընդգրկված երեխաներին արհեստագործական ուսումնարաններում և դպրոցներում ընդգրկելու ուղղությամբ	մշտական	ԿԳ վարչություն, բաժին
7	Կազմակերպել և անցկացնել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը	փետրվար-մարտ	ԿԳ վարչություն
8	«Այբ» կրթական հիմնադրամի հետ համաձայնագրի շրջանակներում աջակցել «Կենգուրու» մաթեմատիկական խաղ-մրցույթի, «Դիջիթեք» և «Էկոտուր» ամենամյա ստուգատես-մրցույթների անցկացման կազմակերպչական աշխատանքներին	մարտ	ԿԳ վարչություն, բաժին
9	ՀՀ ԿԳ նախարարության օժանդակությամբ կազմակերպել և անցկացնել հանրակրթական դպրոցների մանկավարժական աշխատողների հերթական նախատեստացիոն վերապատրաստման դասընթացներ	մարտ	ԿԳ վարչություն, բաժին, շրջվարչակազմ. աշխատակազմ. /Ստեփ.քաղ./ կրթ. բաժիններ
10	Հանրապետության ուսուցիչների և բարձր դասարանցիների համար կատարել դպրոցականների առարկայական օլիմպիադաների առաջադրանքների վերլուծություն և հրապարակել «Լուսարար» թերթում	մարտ-ապրիլ	ԱրՊՀ դասախոսներ, նախ.մասնագ-ներ
11	Ապահովել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի հաղթողների մասնակցությունը ՀՀ-ում անցկացվող օլիմպիադայի եզրափակիչ փուլին՝ ըստ ժամանակացույցի	մարտ-ապրիլ	ԿԳ վարչություն, բաժին

12	Ամփոփել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի արդյունքները, դրանք քննարկել նախարարին կից խորհրդակցությունում և արդյունքների մասին հանդես գալ «Լուսարար» պաշտոնաթերթում	ապրիլ	ԿԳ վարչության պետ
13	Կազմակերպել հանդիպում օլիմպիադայի հանրապետական և եզրափակիչ փուլերում հաղթող ճանաչված աշակերտների եւ նրանց դասավանդող ուսուցիչների հետ՝ կատարելով պարզևատրումներ	ապրիլ	ԿԳ վարչություն, բաժին
14	Վերահսկել հանրակրթական դպրոցներում պետական ավարտական և էքստեռն կարգով անցկացվող քննությունների ընթացքը և ԳԹԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մասնակցել միասնական քննությունների անցկացման նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներին	տարվա ընթացքում	ԿԳ վարչություն, բաժին, ԳԹԿ
15	ԼՂՀ պաշտպանության բանակի հետ համագործակցության շրջանակներում, Մայիսյան եռատոնի հետ կապված, մասնակցել հանրակրթական դպրոցների աշակերտների եւ Մեծ հայրենականի ու Արցախյան պատերազմի վետերանների հետ կազմակերպվող հանդիպումներին	մայիս	ԿԳ վարչություն
16	Աշակերտների ձիշտ կողմնորոշման նպատակով ԼՂՀ հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանների աշակերտների շրջանում բացատրական աշխատանքներ տանել միջին մասնագիտական հաստատությունների, արհեստագործական և ավագ դպրոցի դերի ու նշանակության մասին	տարվա ընթացքում	ԿԳ վարչություն, բաժին, շրջվարչ. /Ստեփ.քաղ/ կրթ. բաժիններ
17	Ուսումնասիրել «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթների շրջանային փուլում հաղթող ճանաչված եւ հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցների տնօրենների, ուսուցիչների և աշակերտների հանրապետական հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը	2-րդ եռամսյակ	ԿԳ վարչ. պետ, Հանրապետական հանձնաժողովի անդամներ
18	Ուսումնասիրել «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթների շրջանային փուլում հաղթող ճանաչված ու հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցների տնօրենների և ուսուցիչների գործունեությունը տեղերում և արդյունքներն ամփոփել	2-րդ եռամսյակ	ԿԳ վարչ. պետ, ԿՊՏ պետ, Հանրապետական հանձնաժողովի անդամներ
19	ԼՂՀ հանրակրթական դպրոցների և արհեստագործական ուսումնարանների շրջանավարտների համար անհրաժեշտ ավարտական փաստաթղթերի ստացում և բաշխում	2-րդ եռամսյակ	բաժնի վարիչ
20	Ճշտել և ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ մեթոդական գրականություն, դպրոցական նոր դասագրքեր, համապատասխան ծրագրեր, դասա-մատյաններ, ուսուցիչների ձեռնարկներ և դրանք առաքել շրջվարչակազմերի /Ստեփանակերտ քաղաքի/ աշխատակազմերի կրթության բաժիններ	3-րդ եռամսյակ	ԿԳ վարչություն, շրջվարչ. /Ստեփ.քաղ./ կրթ. բաժիններ
21	ՀՀ ԿԳ նախարարության օժանդակությամբ կազմակերպել և անցկացնել հանրակրթական դպրոցների «Շախմատ» առարկան դասավանդողների հերթական նախատեստացիոն վերապատրաստման դասընթացներ	3-րդ եռամսյակ	ԿԳ վարչություն, բաժին, շրջվարչ. աշխատակազմ. /Ստեփ.քաղ./ կրթ. բաժիններ

22	Ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունները հանրապետության բոլոր շրջաններում կազմակերպված անցկացնելու նպատակով մշակել պլան- գրաֆիկ և առաջնորդվել դրանով	օգոստոս	ԿԳ վարչություն, հանրակրթ. բաժին, շրջվարչ./Ստեփ. քաղ./ կրթ. բաժիններ
23	Կազմակերպել և անցկացնել «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթի հանրապետական փուլը	ապրիլ	ԿԳ վարչ. պետ, բաժին
24	Վերահսկել հանրապետության տարածքում դպրոցահասակ երեխաների հաշվառման և տվյալ օրացուցային տարվա մինչև դեկտեմբերի 31-ը 6 տարեկան լրացած երեխաներին դպրոց ընդգրկելու աշխատանքները	օգոստոս- սեպտեմբեր	բաժին, շրջվարչ. աշխատակազմ. /Ստեփ.քաղ./ կրթ. բաժիններ
25	Ապահովել ԼՂՀ հանրակրթական դպրոցների աշակերտների մասնակցությունը ՀՀ-ում անցկացվող հայագիտական օլիմպիադային	3-րդ եռամսյակ	վարչություն
26	Քննարկել Ստեփանակերտի հ.3 ռուսերենով ուսուցմամբ դպրոցի առաջին դասարան ընդունվելու համար ներկայացված դիմումները և թույլատրել ընդունելությունը կատարել ըստ գործող կարգի	օգոստոս- սեպտեմբեր	ԿԳ վարչության պետ, բաժնի վարիչ
27	Մշակել պլան գրաֆիկ՝ հանրակրթական դպրոցներում «Գիտելիքի օրը», «Ուսուցչի օրը», «Վերջին զանգի» և մյուս հանդիսավոր կերպով նշվող տարելիցներին մասնակցելու և ընթացքը վերահսկելու նպատակով	ուս.տարվա ընթացքում	ԿԳ վարչություն, շրջվարչ. աշխատակազմ. /Ստեփ.քաղ./ կրթ. բաժիններ
28	Կազմակերպել և բարձր մակարդակով ու հանդիսավոր կերպով անցկացնել հոկտեմբերի 5-ի՝ Ուսուցչի օրվա տոնակատարությունը	հոկտեմբեր	ԿԳ վարչություն, շրջվարչ. աշխատակազմ. /Ստեփ.քաղ./ կրթ. բաժիններ
29	«Այբ» կրթական հիմնադրամի հետ համաձայնագրի շրջանակներում աջակցել «Ռուսական արջուկ» լեզվագիտական խաղ-մրցույթի անցկացման կազմակերպչական աշխատանքներին	նոյեմբեր	ԿԳ վարչություն, բաժին
30	Նպատակապես գործունեություն ծավալել հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման և անհրաժեշտ մեթոդական ու մասնագիտական օգնություն ցույց տալու ուղղությամբ: Օժանդակել և մասնակցել հանրակրթական դպրոցներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին	ուս.տարվա ընթացքում	ԿԳ վարչություն, բաժին
31	Աջակցել և մասնակցել Մարտունու, Ասկերանի, Քաշաթաղի շրջվարչակազմերի աշխատակազմերի կողմից հենակետային դպրոցներում կազմակերպվող փնջային ու առարկայական մեթոդխորհուրդների նիստերին և ցուցաբերել անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական օգնություն	3-րդ եռամսյակ	ԿԳ վարչություն, բաժին
32	Մշտապես կապ պահպանել հանրապետության ավագ և հոսքային դպրոցներում գործող առարկայական մեթոդխորհուրդների հետ, ամեն կերպ աջակցել նրանց աշխատանքներին և մասնակցել նրանց կողմից կազմակերպվող դաս-միջոցառումներին, ընդօրինակման դասերին և մեթոդխորհուրդների նիստերին	ուս.տարվա ընթացքում	ԿԳ վարչություն, բաժին



33	Շրջվարչակազմերի /Ստեփանակերտի քաղաքապետարանի/ աշխատակազմերի կրթության բաժինների, արհեստագործական ուսումնարանների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա կազմել և ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացնել շրջանավարտների համար անհրաժեշտ քանակի ավարտական փաստաթղթերի ստացման և բաշխման մասին հաշվետվություն	4-րդ եռամսյակ	բաժնի վարիչ
34	Ելնելով 2009թ. հուլիսի 30-ի ԼՂՀ կառավարության «Մանկավարժին այլ վայր ուղեգրելու մասին» N 466 որոշումից և որոշման մեջ կատարված համապատասխան փոփոխությունից հանրակրթական դպրոցներն ապահովել համապատասխան մասնագետներով	ուս.տարվա ընթացքում	ԿԳ վարչություն
35	Վերահսկել շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինների կողմից նախարարության ընդունած որոշումների, հրամանների, կարգադրությունների եւ հրահանգչական փաստաթղթերի իրականացման ընթացքը	տարվա ընթացքում	ԿԳ վարչություն

**գ/ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ**

ՀՀ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողը
1	Թարմացնել ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների տեղեկատվական բազան	հունվար	բաժնի վարիչ
2	Մասնակցել Ստեփանակերտի նախադպրոցական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ամանորյա միջոցառումներին	հունվար	բաժնի վարիչ, մասնագետներ
3	Այցելել Մարտակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն՝ երկրորդ կիսամյակում ընթացող ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	հունվար	բաժնի վարիչ, մասնագետներ
4	Այցելել Ստեփանակերտի հ. 6 և 9 հիմնական դպրոցներ՝ նախադպրոցական խմբերի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների ծանոթացման և մեթոդական օգնության ցուցաբերման նպատակով	հունվար	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
5	Արցախի հոգևոր թեմի հետ կազմել միասնական աշխատանքային պլան՝ ԼՂՀ նախադպրոցական հաստատություններում աղանդավորության դեմ պայքար տանելու նպատակով	փետրվար	բաժին, Արցախի թեմ
6	Կազմակերպել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցի նախադպրոցական խմբում	փետրվար	բաժնի վարիչ, գլխ. մասնագետ
7	ԼՂՀ շրջանային բաժիններ առաքել Եղեռնի 100-ամյակին նվիրված 2015թ. միջոցառումների ժամանակացույցը և կանոնակարգերը	փետրվար	վարչություն, բաժին
8	Մասնակցել Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում և մանկապարտեզներում անցկացվող մայրության և գեղեցկության տոնական միջոցառումներին	մարտ, ապրիլ	բաժնի վարիչ, մասնագետներ
9	Աշխատանքներ տանել ՀՀ Ազգային ժողովի նախագահի հովանու ներքո անցկացվող ասմունքի մանկապատանեկան 9-րդ մրցույթ-փառատոնի հանրապետական փուլի կազմակերպման ու անցկացման ուղղությամբ	մարտ	վարչություն, բաժին

10	Այցելել Շուշիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն՝ կատարվող աշխատանքներին ծանոթանալու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	մարտ	բաժնի վարիչ, մասնագետներ
11	Կազմակերպել և անցկացնել ԿԳՆ և ԼԴՀ «Մայրություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ ԼԴՀ հանրակրթական դպրոցների 15-17 տարեկան դպրոցականների միջև «Հայ պատանի ասպետ» մրցույթը	ապրիլ	վարչություն, բաժին
12	Այցելել Հաղրութի շրջանի Դրախտիկ և Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղերի մանկապարտեզներ՝ համալիր ստուգման և մեթոդական օգնության ցուցաբերման նպատակով	ապրիլ	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
13	Աջակցել Ստեփանակերտի հ. 1 մանկապարտեզում օրինակելի պարապմունքի անցկացմանը	ապրիլ	բաժին
14	Ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքին ծանոթանալու նպատակով այցելել Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի նախադպրոցական խմբերը	ապրիլ	բաժնի վարիչ, մասնագետներ
15	Կազմակերպել և անցկացնել ասմունքի և հայրենասիրական երգերի մրցույթ-փառատոնի հանրապետական փուլը	ապրիլ	բաժնի վարիչ, մասնագետներ
16	Կազմել և ԼԴՀ մանկապարտեզներ առաքել նոր մեթոդական և աշխատանքային ուղեցույցներ	մայիս	բաժին
17	Մասնակցել ԼԴՀ հանրակրթական դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումներին	մայիս	բաժնի վարիչ, մասնագետներ
18	Մեթոդական օգնության ցուցաբերման նպատակով այցելել Կովսականի նորաբաց մանկապարտեզ	մայիս	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
19	Ստեփանակերտի նախադպրոցական հաստատությունների տնօրինությունների հետ համատեղ կազմակերպել տոնական համերգ՝ նվիրված երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան	հունիս	բաժին
20	Հունիսի 1-ին երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված անցկացնել գեղարվեստական մրցույթ մանկապարտեզների միջև	հունիս	բաժնի վարիչ, մասնագետներ
21	Այցելել «Լավագույն դաստիարակ» մրցույթին հայտ ներկայացրած մանկապարտեզները՝ մրցույթի շրջանային փուլում հաղթող ճանաչված դաստիարակների աշխատանքներին ծանոթանալու նպատակով	հունիս	վարչություն, բաժին
22	Համակողմանի ստուգման և մեթոդական օգնության ցուցաբերման նպատակով ԿՊՏ-ի հետ համատեղ այցելել Բերձորի մանկապարտեզ	հունիս	ԿՊՏ բաժին
23	Համակողմանի ստուգման և մեթոդական օգնության ցուցաբերման նպատակով ԿՊՏ-ի հետ համատեղ այցելել Հաղրութի շրջանի Ազիսի և Մարտունու շրջանի Գ. Ճարտարի և Ղ. Ճարտարի մանկապարտեզները	հուլիս	ԿՊՏ բաժին
24	Կազմակերպել դպրոցական ամառային ճամբարներ	հուլիս, օգոստոս	բաժնի վարիչ, մասնագետներ
25	Նախապատրաստել Հունաստանի հանգստյան ճամբար մեկնող երեխաների փաստաթղթերը	օգոստոս	բաժնի վարիչ, մասնագետներ
26	Աջակցել և մասնակցել ԵրՊՀ-ի կողմից կազմակերպվող համահայկական ասմունքի մրցույթին	օգոստոս	բաժնի վարիչ, մասնագետներ

27	Այցելել Մարտակերտի շրջանի Մեծ Շենի նորաբաց մանկապարտեզ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	սեպտեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
28	Ամփոփել «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի արդյունքները և ներկայացնել տեղեկանք մրցույթի հանրապետական հանձնաժողովին	սեպտեմբեր	վարչություն, բաժին
29	Մասնակցել և աջակցել «Ուսուցչի օրվան» նվիրված հանդիսավոր միջոցառմանը:	հոկտեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
30	Կազմակերպել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի 6-ժամյա նախադպրոցական խմբում	նոյեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
31	Այցելել Ասկերանի ՀԱԸ և Այգեստանի մանկապարտեզները՝ համակողմանի ստուգման և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	նոյեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
32	Կազմել ամփոփ հաշվետվություն տարվա կատարված աշխատանքների վերաբերյալ	դեկտեմբեր	բաժին
33	Մասնակցել տարեվերջյան ամանորյա միջոցառումներին	դեկտեմբեր	բաժին
34	Արցախի հոգևոր թեմի հետ համատեղ կազմած պլանի համաձայն՝ անցկացնել հանդիպումներ՝ Ստեփանակերտի հհ. 1, 2, 3 պետական, «Սոսե» և ՀԱԸ մանկապարտեզների կոլեկտիվների հետ	տարվա ընթացքում	բաժնի վարիչ, մասնագետներ
35	Աջակցել ԼՂՀ մանկապարտեզներում և հանրակրթական դպրոցներում ազգային, հոգևոր և պետական տոների անցկացմանը	տարվա ընթացքում	բաժնի վարիչ, մասնագետներ

**Պ/ ՈԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ՖԻԶՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ  
ՈԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողը
1.	<p>Մասնակցել հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվող արիության դասերին, ցերեկույթներին նվիրված միջազգային, ՀՀ և ԼՂՀ տոն և հիշատակի օրերին՝</p> <ul style="list-style-type: none"> <li>-Արցախի վերածննդի օր</li> <li>-Հայրենյաց պաշտպանի օր</li> <li>-Գերիների միջազգային օր</li> <li>-Ցեղասպանության զոհերի հիշատակի օր</li> <li>-Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի տոն, Շուշիի ազատագրման և ՊԲ կազմավորման օր</li> <li>-Երեխաների պաշտպանության միջազգային օր</li> <li>-Հայրենիքի համար նահատակվածների և անհայտ կորածների հիշատակի օր</li> <li>-Գիտելիքների և դպրության օր</li> <li>- ԼՂՀ անկախության օր</li> <li>- Հաշմանդամների միջազգային օր</li> <li>- ԼՂՀ պետական անկախության մասին հանրաքվեի և սահմանադրության օր</li> <li>-Արցախյան պատերազմի նվիրյալներին</li> <li>-Արցախյան պատերազմի հիշարժան օրերին</li> <li>-Հայ ականավոր պետական , քաղաքական և ռազմական գործիչներին նվիրված</li> </ul>	<p>Փետրվարի 20 Փետրվարի 23/ Ապրիլի 14 Ապրիլի 24</p> <p>Մայիսի 9 Հունիսի 1</p> <p>Հունիսի 29 Սեպտեմբերի 1 Սեպտեմբերի 2 դեկտեմբերի 3</p> <p>Դեկտեմբերի 10 Ըստ հիշարժան տարեթվերի ժամանակացույցի</p>	ԿԳ և ՊՆ ՈՀԴ և ՀԿԿ բաժիններ

2.	<p>Մասնակցել հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվող Արցախի հերոսների ծննդյան օրերին նվիրված հուշ ցերեկույթներին՝</p> <ul style="list-style-type: none"> <li>-Վահագն Վարդևանյան՝ Արցախի հերոս</li> <li>-Պետրոս Ղևոնդյան՝ Արցախի հերոս</li> <li>-Յուրի Պողոսյան՝ ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս</li> <li>-Աշոտ Ղուլյան՝ Արցախի հերոս</li> <li>-Մոնթե Մելքոնյան՝ ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս</li> <li>-Քրիստաֆոր Իվանյան՝ Արցախի հերոս</li> <li>-Վազգեն Սարգսյան ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս</li> </ul>	<p>տարվա ընթացքում</p> <p>հունվարի 27 հունվարի 30 ապրիլի 8 հոկտեմբերի 6 նոյեմբերի 25 դեկտեմբերի 20 մարտի 5</p>	<p>ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժիններ, դպրոց. տնօրեններ</p>
3.	<p>Մասնակցել հանրակրթական դպրոցների 9-11-րդ դասարանների աշակերտների ընդգրկմամբ «Մայիսյան եռատոնին» նվիրված շարադրությունների մրցույթի շրջանային և հանրապետական փուլերի կազմակերպչական աշխատանքներին</p>	<p>I – II եռամսյակ</p>	<p>ԿԳ վարչություն բաժնի վարիչ, մասնագետներ</p>
4.	<p>Հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների զինղեկների վերապատրաստման և ատեստավորման նպատակով եռօրյա ուսումնամեթոդական հավաքների կազմակերպում</p>	<p>Մարտի 18-20</p>	<p>ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժիններ</p>
5.	<p>Հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանցիների հետ մեկօրյա ռազմադաշտային պարապմունքների կազմակերպում</p>	<p>ապրիլի 29-30</p>	<p>ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժիններ</p>
6.	<p>ԿԳՆ պետական տեսչության հանձնախմբի կազմում հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասալսումների կատարում և մեթոդական օգնության ցուցաբերում ՆԶՊ և ՖԴ առարկաների ուսուցիչներին</p>	<p>ուս.տարվա ընթացքում</p>	<p>ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժիններ</p>
7.	<p>Մասնակցել հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ՆԶՊ և ՖԴ դասընթացի տարբեր բաժիններից կազմակերպված բաց դասերին և ցուցաբերել մեթոդական օգնություն</p>	<p>համաձայն ժամանակացույցի</p>	<p>ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժինների մասնագետներ</p>
8.	<p>Մասնակցել հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում բաց տիպի պարզագույն մարզական համալիրների վերանորոգման և նորերի կառուցման աշխատանքներին և ցուցաբերել մեթոդական օգնություն ու աջակցություն</p>	<p>տարվա ընթացքում</p>	<p>բաժին</p>
9.	<p>Նախապարապմունքային մարմնամարզության և արտադասարանական մարզական աշխատանքների կազմակերպման և անցկացման ընթացքը ստուգելու նպատակով շրջայցերի կատարում Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցներ</p>	<p>ուս.տարվա ընթացքում ամեն ամիս</p>	<p>վարչություն բաժիններ</p>
10.	<p>ՆԶՊ և ՖԴ ծրագրերի, չափորոշիչների, մեթոդական ուղեցույցների ուսումնասիրում և պարզաբանումներով ներկայացում ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունների մասնախմբային նիստերում</p>	<p>օգոստոս ամսում</p>	<p>բաժնի վարիչ մասնագետներ</p>
11.	<p>Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների Ֆիզիկական կուլտուրա առարկայի ուսուցիչների հետ 5-օրյա վերապատրաստման դասընթացների կազմակերպում</p>	<p>մարտ</p>	<p>բաժնի գլխավոր մասնագետ</p>
12.	<p>«Տարվա լավագույն զինղեկ» մրցույթի շրջանային /քաղաքային/ փուլում հաղթող ձանաչված և հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած զինղեկների փաստաթղթերը ուսումնասիրում</p>	<p>ապրիլ-մայիս</p>	<p>հանրապետ. հանձնաժողով</p>

13.	Մասնակցել ԿԳՆ հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվող և անցկացվող ռազմահայրենասիրական դաստիարակության թեմաներով միջոցառումներին	տարվա ընթացքում	բաժնի վարիչ, մասնագետներ
14.	Հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարանցիների ընդգրկմամբ «Ասպետ» ռազմամարզական ճամբարի կազմակերպում	հուլիս-օգոստոս	ԿԳ վարչություն բաժինների վարիչներ
15.	Բանակ-դպրոց գիտագործնական կոնֆերանսի կազմակերպում	հոկտեմբեր	ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀ բաժիններ
16.	Մասնակցություն Երևան քաղաքում անցկացվող բանակ-դպրոց գիտագործնական համաժողովին	դեկտեմբեր	բաժնի վարիչ

**Ո Ա Ջ Մ Ա Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն, Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն, Մ Ա Ս Ս Ա Յ Ա Կ Ա Ն  
Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր**

	<i>Աշխատանքի բովանդակությունը</i>	<i>Կատարման ժամկետը</i>	<i>Պատասխանատու անձ</i>
1.	ԼՂՀ դպրոցականների ռազմամարզական միջոցառումների կանոնադրությունների վերանշակում և կից փաստաթղթերով առաքում շրջվարչակազմերի կրթության բաժիններ	հունվար-փետրվար	ԿԳ վարչություն բաժին
2.	Ռազմամարզական և զանգվածային մարզական միջոցառումները պատշաճ մակարդակով անցկացնելու գործում շրջվարչակազմերի /Ստեփանակերտի քաղաքապետարանի/ աշխատակազմերի կրթության բաժիններին գործնական օգնության ցուցաբերում	տարվա ընթացքում	բաժնի վարիչ մասնագետներ
3.	9-11-րդ դասարանցիների միջև ռազմականացված հնգամարտի մրցումների հանրապետական փուլի կազմակերպում և անցկացում	մարտի 24-26	բաժնի վարիչ, մասնագետներ
4.	«Արծվիկ» ռազմամարզական խաղերի հանրապետական մրցումների անցկացում	ապրիլի 14-17	բաժին
5.	ԼՂՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության հանրապետական առաջնության կազմակերպում և անցկացում /3-6-րդ դասարանցիների միջև/	մայիսի 13-15	ԿԳ վարչություն բաժնի վարիչ
6.	Մայիսյան եռատոնին նվիրված «Ռազմականացված կրոսավազքի» հանրապետական մրցումների անցկացում՝ 9-11-րդ դասարանցիների ընդգրկմամբ	մայիսի 20-21	բաժնի վարիչ, մասնագետներ
7.	Կալաշնիկովի ինքնաձիգից 11-րդ դասարանների տղաների միջև հրաձգության հանրապետական առաջնության անցկացում	հոկտեմբերի 20-21	բաժնի վարիչ մասնագետներ
8.	ԼՂՀ Կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության հետ համատեղ «Պատանի փրկարարների» հավաք-մրցույթի անցկացում	հոկտեմբեր	ԼՂՀ ԿԱ փրկարար ծառ, բաժնի վարիչ, մասնագետներ
9.	Մասնակցություն ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության եզրափակիչ մրցումներին	մայիս-հունիս	բաժնի վարիչ, մասնագետներ
10.	Հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 10-11-րդ դասարանների տղաների միջև «Ռուժային եռամարտի» հանրապետական մրցումների անցկացում	դեկտեմբերի 15-17	բաժնի վարիչ, մասնագետներ
11.	Հանրապետության հանրակրթական դպրոցների դպրոցականների միջև 6-րդ սպարտակիադայի ծրագրով հանրապետական մրցումների կազմակերպում և անցկացում՝		բաժնի վարիչ

	- վոլեյբոլ/տղաներ և աղջիկներ/ - բասկետբոլ/տղաներ և աղջիկներ / - շախմատի օլիմպիադա - աթլետիկական մրցումներ - մինի ֆուտբոլ - հանդբոլ/տղաներ և աղջիկներ/ - սեղանի թենիս	փետրվարի 2-13 մարտի 9-20 ապրիլի 7-9 մայիսի 4-6 սեպտեմբերի 21-25 հոկտեմբերի 5-11 դեկտեմբերի 8-11	մասնագետներ
12.	Մասնակցել ՀՀ դպրոցականների 24-րդ մարզական խաղերի եզրափակիչ փուլին	հունիս	
13.	Մասնակցել ՀՀ դպրոցականների շախմատի օլիմպիադայի եզրափակիչ փուլին	հունիս	

### 3.2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողը
1.	Ասկերանի շրջանի Խրամորթի միջնակարգ դպրոցի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հունվար	ԿՊՏ պետական տեսուչներ
2.	Ասկերանի շրջանի Հարավի միջնակարգ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հունվար	ԿՊՏ պետական տեսուչներ
3.	ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի 2015 թ. շրջանային /քաղաքային/ փուլի առաջադրանքների կազմում	հունվար փետրվար	Կրթության պետական տեսչություն
4.	Մարտունու արհեստագործական ուսումնարանի և Մ. Մելքոնյանի անվան հ. 2 մանկապարտեզի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	փետրվար	ԿՊ տեսչություն, նախադպր. և արտադպր. բաժին
5.	Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	փետրվար	ԿՊՏ պետական տեսուչներ
6.	Ասկերանի շրջանի Աստղաշենի Ժ. Անդրյանի անվան միջնակարգ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	փետրվար	ԿՊՏ պետական տեսուչներ
7.	Մարտունու շրջանի Բերդաշենի Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	փետրվար	ԿՊՏ պետական տեսուչներ
8.	Հաղրութի շրջանի Տողի Վ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	մարտ	ԿՊՏ պետական տեսուչներ
9.	Մարտունու շրջանի Աշանի Ա. Հովսեփյանի անվան և Նորշենի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	մարտ	ԿՊՏ պետական տեսուչներ
10.	Մարտակերտի շրջանի Պողոսագոմերի Յու. Առստամյանի անվան և Դրմբոնի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	մարտ	ԿՊՏ պետական տեսուչներ
11.	Մասնակցություն ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի անցկացման աշխատանքներին	մարտ	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
12.	Շուշիի Խ. Արուսյանի անվան հիմնական դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	ապրիլ	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
13.	Քաշաթաղի շրջանի Միջնավանի Գ. Ստարավոյտովայի անվան և Վանի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	ապրիլ	ԿՊՏ պետական տեսուչներ

14.	Մարտակերտի շրջանի Հաթերքի Բ. Գրիգորյանի անվան և Զազլիկի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	մայիս	ԿՊՏ պետական տեսուչներ
15.	Մասնակցություն Մայիսյան եռատոնին նվիրված տոնակատարություններին քաղաքի դպրոցներում	մայիս	ԿՊՏ պետական տեսուչներ
16.	Ստեփանակերտ քաղաքի և Շուշիի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	մայիս	ԿՊ տեսչության պետ, բաժնի վարիչներ
17.	Քաշաթաղի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում. Բերձորի մանկապարտեզի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հունիս	ԿՊ տեսչություն, նախադպր. և արտադպր. բաժին
18.	Մարտակերտի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	հունիս	ԿՊ տեսչության պետ, բաժնի վարիչներ
19.	Ասկերանի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	հունիս	ԿՊ տեսչության պետ, բաժնի վարիչներ
20.	Շահումյանի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	հունիս	ԿՊ տեսչության պետ, բաժնի վարիչներ
21.	2015 թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունների կազմում	հունիս	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
22.	2014-2015 ուստարում իրականացված ստուգումների հիման վրա մասնագիտական վերլուծություններ	հուլիս	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
23.	Հաղրուքի շրջանի Ազոխի մանկապարտեզի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հուլիս	ԿՊ տեսչ-ն, նախադպր. և արտադպր. բաժին
24.	Հաղրուքի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	հուլիս	ԿՊ տեսչության պետ, բաժնի վարիչներ
25.	Մարտունու շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	հուլիս	ԿՊ տեսչության պետ, բաժնի վարիչներ
26.	Մարտունու շրջանի Ղուզե և Գյունե ճարտարների մանկապարտեզների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հուլիս	ԿՊ տեսչություն, նախադպր. և արտադպր. բաժին
27.	«Լուսարար» պաշտոնաթերթում կրթության պետական տեսչության 2014-2015 ուստարում կատարած աշխատանքների լուսաբանում և վերլուծություն	հուլիս	Կրթության պետական տեսչության պետ
28.	Թեմատիկ ստուգումներ Ստեփանակերտի բոլոր դպրոցներում և արհեստագործական ուսումնարանում	սեպտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
29.	Հաղրուքի շրջանի Հակակվի և Թաղուտի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	սեպտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
30.	Մարտակերտի շրջանի Չափարի Ա. Սաղյանի անվան միջնակարգ և Զարդախաչի Գարիկ Գասպարյանի անվան հիմնական դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	սեպտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ

31.	Մարտունու շրջանի Վազգենաշենի միջնակարգ և Ավրուռի հիմնական դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	սեպտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
32.	2015-2016 ուստարվա հանրակրթական դպրոցների և արհեստագործական ուսումնարանների տարիֆավորման ցուցակների ստուգում	սեպտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսչություն
33.	«Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցների տնօրենների և ներկայացված փորձերի ուսումնասիրում տեղերում	սեպտեմբեր	ԿԳ վարչություն, կրթության պետական տեսչություն
34.	Ստեփանակերտի ռազմամարզական վարժարանի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հոկտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
35.	Քաշաթաղի շրջանի Հայկազյանի և Իշխանաձորի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հոկտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
36.	Քաշաթաղի շրջանի Գողթանիկի և Դրախտաձորի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հոկտեմբեր	Կրթության պետական տեսչություն
37.	Քաշաթաղի շրջանի Աղավնատան և Գետամեջի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	նոյեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
38.	Մարտակերտի շրջանի Կարմիրավանի հիմնական և Հայկաջուրի տարրական դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	նոյեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
39.	Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	դեկտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
40.	Ստուգայցեր Ստեփանակերտի բոլոր, Շուշիի Մուրացանի անվան ավագ, Խ. Աբովյանի անվան հիմնական և Ասկերանի եղ. Բարսեղյանի անվան հոսքային դպրոցներ /թեմատիկ ստուգումներ/	դեկտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
41.	2015 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունների կազմում	դեկտեմբեր	ԿՊ տեսչության պետական տեսուչներ

#### 4. Լ Ե Ձ Վ Ի Տ Ե Ս Չ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողը
1.	Վերահսկողական գործառնություններ և պատասխանատու միջոցառումներ իրականացնել լեզվական քաղաքականության բնագավառում	տարվա ընթացքում	Լեզվի տեսչության պետ
2.	Կազմակերպել շրջայցեր Ստեփանակերտում և շրջաններում՝ վահանակները և ցուցանակները հայերենով ձևավորելու գործընթացի վերահսկման նպատակով	տարվա ընթացքում	Լեզվի տեսչության պետ, առաջատար մասնագետներ
3.	Վերահսկել մամուլում, հեռուստատեսության և ռադիոընկերությունների հաղորդումներում լեզվական քաղաքականության պետական ծրագրի պահանջների կատարումը	տարվա ընթացքում	մասնագետներ
4.	Ապահովել գրական հայերենի կանոնարկումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրա գործածությունը	տարվա ընթացքում	մասնագետներ
5.	Մայրենիի միջազգային օրվա կապակցությամբ հանրակրթական դպրոցներում հայտարարել լավագույն միջոցառումների միամսյակ	հունվար-փետրվար	Լեզվի տեսչության պետ, առաջատար մասնագետներ



6.	<p>ԼՂՀ պետական մարմիններում ու կազմակերպություններում գործավարությունը հայերենով վարելու պահանջի իրականացման վարահսկման նպատակով կազմակերպել սուուգայցեր.</p> <p>ա/ «Ստեփանակերտ սերվիս» ՓԲԸ բ/«Փեյս» հեռուստաընկերություն գ/ Շահունյանի շրջվարչակազմ դ/ Քաշաթաղի շրջվարչակազմ ե/ Շուշիի շրջվարչակազմ զ/ Մարտակերտի շրջվարչակազմ է/ Մարտունու շրջվարչակազմ ը/ «Զերմային տնտեսություն» ՓԲԸ թ/ ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ</p>	<p>հունվար փետրվար մարտ ապրիլ մայիս հունիս հուլիս սեպտեմբեր հոկտեմբեր</p>	<p>Լեզվի տեսչության պետ, առաջատար մասնագետներ</p>
7.	<p>Կրթական համակարգում դասավանդման և դաստիարակության լեզվի՝ գրական հայերենի գործածության պահանջի կատարման վերահսկման նպատակով կազմակերպել սուուգայցեր հանրապետության շրջանների և մայրաքաղաքի դպրոցներ.</p> <p>ա/Ստեփանակերտի N3 միջնակարգ դպրոց բ/ Քոլատակի միջնակարգ դպրոց գ/ Ստեփանակերտի N12 հիմնական դպրոց դ/ Ստեփանակերտի N6 հիմնական դպրոց ե/ Մարտունու արհեստագործական ուսումնարան զ/ Ստեփանակերտի N5 հիմնական դպրոց</p>	<p>փետրվար մարտ ապրիլ մայիս սեպտեմբեր հոկտեմբեր</p>	<p>Լեզվի տեսչության պետ, մասնագետներ</p>
8.	<p>Հայերենին չտիրապետող անձանց համար կազմակերպել և անցկացնել «Հայերենը ոչ հայախոսների համար» եռամսյա դասընթացներ</p>	<p>ապրիլ-հունիս</p>	<p>Լեզվի տեսչության մասնագետներ</p>
9.	<p>Իրականացնել «Լեզվի բնագավառում պետական քաղաքականությունն ու կառավարումը» գրքույկի վերահրատարակում</p>	<p>տարվա ընթացքում</p>	<p>Լեզվի տեսչության մասնագետներ</p>
10.	<p>Ձեռք բերել մասնագիտական բառարաններ</p>	<p>Երրորդ եռամսյակ</p>	<p>Լեզվի տեսչության մասնագետներ</p>
11.	<p>Խորացնել համագործակցությունը ՀՀ լեզվի պետական տեսչության հետ</p>	<p>տարվա ընթացքում</p>	<p>Լեզվի տեսչության մասնագետներ</p>
12.	<p>Կազմել հաջորդ տարվա աշխատանքային պլանը և ներկայացնել վերադասին</p>	<p>դեկտեմբեր</p>	<p>Լեզվի տեսչության պետ</p>
13.	<p>Կազմել հաշվետվություն 2015թ. կատարած աշխատանքների մասին և ներկայացնել վերադասին</p>	<p>դեկտեմբեր</p>	<p>Լեզվի տեսչության պետ</p>